ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ԳՄՆԶԴ 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան «3» մարտի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս Պետական մարմնի գլխավոր քարտուղարի Գագիկ Սաֆարյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ (այսուհետև՝ Կազմակերպություն), ի դեմս նախագահ Արա Մեհրաբյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2121-Ն որոշմամբ (այսուհետև՝ որոշում) ամրագրված դրույթները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է որոշման 09.05.01. 1148 «Արտադպրոցական դաստիարակություն ծրագիր» բյուջետային ծրագրի «11014. «Գիմնազիադա» համաշխարհային խաղերի մասնակցություն» միջոցառմամբ (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված «Գիմնազիադա» համաշխարհային խաղերին մարզիկ դպրոցականների մասնակցության ապահովման նպատակով Կազմակերպությանը հատկացնել մինչև 29902100 (քսանինը միլիոն ինը հարյուր երկու հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը,

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումներ չեն համապատասխանում ծրագրով սահմանված

2.1.4. Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջել իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.5. Պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում Կազմակերպության կողմից կատարողական հաշվետվություններ չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.6. ուսումնասիրել և ընդունել ներկայացվող ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունները՝ Պետական մարմնի պատասխանատու ստորաբաժանման դրական մասնագիտական եզրակացության հիման վրա, կամ հետ վերադարձնել՝ բացասական եզրակացությամբ, ընդ որում բացասական եզրակացությունը կարող է հիմք հանդիսանալ սահմանված կարգով Կազմակերպության ֆինանսավորման նվազեցման համար,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան օգտագործումը.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը Պետական մարմին ներկայացնել նախորդ եռամսյակի ընթացքում իրականացված Միջոցառումների վերաբերյալ ոչ ֆինանսական հաշվետվություն, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի: Ընդ որում ներկայացված հաշվետվությունը Պետական մարմնի կողմից ընդունվում է թերությունների բացակայության դեպքում կամ հայտնաբերված թերությունները Կազմակերպության կողմից վերացնելուց հետո:

2.4.5. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում՝ անվճար, պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7.Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, Կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Պետական մարմինը Պայմանագրի 1.1. կետում նշված գումարը Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2121-Ն որոշման համաձայն, փոխանցում է Կազմակերպության հաշվին համամասնորեն՝ ամսական կտրվածքով՝ ոչ ուշ քան տվյալ ամսվա 10-ը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել՝ չիրականացված միջոցառման գումարի չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով, իսկ 2.4.4.-ի դեպքում՝ 0.05 տոկոսի չափով տույժ յուրաքանչյուր կետանց օրվա համար: Ընդ որում, տուգանքի կամ տույժի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից կամ Կազմակերպությունը հետ է վերադարձնում Հայաստանի Հանրապետության

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման, ինչպես նաև պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030971
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Սաֆարյան
/ստորագրություն/ Կ.Տ

«Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ

ք. Երևան, Ագաթանգեղոսի 13

«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510022842720100
ՀՎՀՀ 02700421

Նախագահ՝

_____ Ս. Մեհրաբյան
/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված 1
«3» մարտի 2022 թ. կնքված
N ԳՄՆԶԴ1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	**Համառոտ բովանդակությունը**	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Վերջնաժամկետը**	**Պահանջվող գումարը (դրամ)**
1.	«Գիմնազիադա» համաշխարհային խաղերի մասնակցություն»	Դպրոցականների համաշխարհային 19-րդ ամառային խաղերի մասնակցության ապահովում, Կազմակերպությունը միջոցառմանը կմասնակցի բռնցքամարտ, ազատ և հունահռոմեական ոճերի ըմբշամարտ, սեղանի թենիս, ձյուդո և թեքվանդո մարզաձևերից	Դպրոցական տարիքի երեխաների մարզաձևերի զարգացում	**Արդյունքները** Դպրոցական տարիքի երեխաների տարբեր մարզաձևերի զարգացում և մրցանակային տեղերի գրավում: **Գնահատման չափանիշները** Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն նախորդ տարիների ցուցանիշների համեմատությամբ:	2022թ. դեկտեմբերի 30-ը	29.902.044
	Ընդամենը					**29.902.044**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011030971
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Գ. Սաֆարյան
/ստորագրություն/ Կ.Տ

«Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ

ք. Երևան, Ազատանգեղոսի 13

«Արարատբանկ» ԲԲԸ
հ/հ 1510022842720100
ՀՎՀՀ 02700421

Նախագահ՝
_____ Ա. Մեհրաբյան
/ստորագրություն/ Կ.Տ